ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/8-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 26 **-ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Է. Փոթոյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **28.02.2020թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-9/8-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***15,139,166 (տասնհինգ միլիոն հարյուր երեսունինը հազար հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Հասցե՝ք.Երևան, Աբովյան փ./23
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 19300106184800
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02811842
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Է. ՓՈԹՈՅԱՆ
	Հ/Հ ՀՀ Շրջ. Հյուր Հյուր
	24.003232128

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Հ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2020թ. ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդեռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.
6.	Բակտիցիդ	կգ	170	16,399	2,787,830	170		
8.	Ֆորմալին 40%	լիտր	800	404.17	323,336	400		400
9.	Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ գրանուլներ	հատ	1100	1,880	2,068,000	550	550	
10.	Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր	հատ	150000	66.40	9,960,000		75000	75000
Ընդամենը					**15,139,166**			

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝							
				Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ.
6.	**Միջատասպան նյութեր**/Բակտիցիդ /	24451110/504	2,787,830	2,787,830	2,787,830	2,787,830	2,787,830	2,787,830	2,787,830	2,787,830	2,787,830
8.	**Ախտահանիչ հեղուկ նյութեր**/Ֆորմալին 40%/	24451141/521	323,336	161,668	161,668	161,668	161,668	161,668	323,336	323,336	323,336
9.	**Հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ**/Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ գրանուլներ /	33621641/528	2,068,000	1,034,000	1,034,000	2,068,000	2,068,000	2,068,000	2,068,000	2,068,000	2,068,000
10.	**Հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ**/Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր/	33621641/529	9,960,000	0	0	4,980,000	4,980,000	4,980,000	9,960,000	9,960,000	9,960,000
Ընդամենը			**15,139,166**	**3,983,498**	**3,983,498**	**9,997,498**	**9,997,498**	**9,997,498**	**15,139,166**	**15,139,166**	**15,139,166**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
տնօրեն

Է. ՓՈՒՌՈՅԱՆ

հ/հ 24 24 գրանցում
29. 03232188